

ԲՈՒՆԵՅ ԳՐԱՊԻԱԿԱՆ ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐԱՄԱՆ ԴՊՐՈՅՐ

(Շար. տես Բազմ. 1946, թիւ 11-12, էջ 310)

ՄԱՍ Բ.

ԲՈՒՆԵՅ ԴՊՐՈՅԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԱՄԱՆ

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱՅ

Իր ծննդեան թուականը մեզի կը մնայ անծանօթ, սակայն 1587ին արգէն կ'երեւայ իբր ծաղկող, երբ Ամիթի մէջ իր եղբայրը Բաղտասար՝ Աւետարան մը կը գրէ մահատեսի Հոռոմի համար 1587ին «ի գուռն սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյն նորա Մարտիրոսին, և այլ սրբոցն որ աստ կան հաւաքեալ»⁽¹⁶⁾։ Բաղտասար կ'աւելցնէ «եւ զեղբարն իմ զտէր Ներսէսն զծաղկող սուրբ աւետարանին» (անդ)։

Ներսէս ծաղկող Բուենց՝ որդին էր գրիչ Մարտիրոս քահանայ Բուենցի։ Իր մօր անունը Մովսէսն էր, և ունէր երկու քահանայ եղբայրներ տէր Գրիգոր և տէր Բաղտասար, վերջինս բազմարդիւն գրիչ մը, ինչպէս նաեւ Կարապետ, Կիրակոս և Ղուկաս անուամբ երեք ուրիշ եղբայրներ։

1579ին Բուենց գիւղին մէջ (Մոկաց), Ներսէս քահանայ կը գրէ Աւետարան մը խոջայ Խաղնադարին համար⁽¹⁷⁾։ Դժբաղդաբար ցուցակագիր Լալայեան՝ որ ցուցակագրութեան մէջ այդ տեղեկութիւնները կու տայ՝ չի տար մեզի ատենց աղբիւր յիշատակարանը, այլ ցուցակին կը կցէ հրատարակութիւնը ստացողի զանազան յիշատակարանները, որոնք հոս մեզի համար արժէքէ զուրկ են։

Սակայն ցուցակագիր Լալայեան կը վըկայէ որ ձեռագիրը ճոխ էր ծաղկումներով

և մանրանկարներով։ «Սկզբնատառք՝ գուռնաւոր թռչնագրեր։ Լուսանցադարդք՝ գուռնաւոր ծաղիկներ և սրբերի պատկերներ։ Մանրանկարք՝ 18-4 աւետարանիչներ, ոսկեզօծ։ Խորանք՝ 10։ Կիսախորանք՝ 4» (անդ)։

Ներսէս քահանայի ծաղկեկարած միւս Աւետարաններէն միայն հատ մը, ինչպէս որ պիտի տեսնենք, ոսկիով ծաղկուած և մանրանկարուած է։ Իր գործերը ընդհանրապէս բազմագոյն են, սակայն չեն ճոխացուած ոսկիով։

Արդ այս սահմանափակ նիւթով չենք կրնար որոշ ըսել թէ հոս յիշուած գրիչ Ներսէսը նոյն ինքն մեր Ներսէս քահանայ Բուենց ծաղկողն ըլլայ։ Այսուհանդերձ հաւանական է նոյնութիւնը քանի որ Ներսէս ծաղկող 1587ին արգէն ծաղկող էր, և իրմէ կ'ակնկալուի որ գրիչ եղած ըլլայ նախ քան ծաղկող եղած ըլլալը, որովհետեւ իր եղբայրն ալ, հայրն ալ գրիչներ էին։

Ներսէս անտարակոյս իր Մարտիրոս հօրմէն սորվեցաւ գրչութեան արուեստը։ 1587ին Ամիթ գտնուելուն պատճառը որոշ չէ, գուցէ հոն էր իր եղբոր հետ գրչութեան և ծաղկի արուեստներուն մէջ աւելի կըրթուելու համար։

Ներսէս ոչ մէկ տեղ կը յիշէ իր վարպետները։ Կ'երեւայ թէ փափաք ունեցած է տաղաչափութեան մէջ ալ իր ձեռքը փորձելու, և իրմէ քանի մը յիշատակարաններ ունինք տաղաչափեալ՝ որոնք հոս պիտի տանք ի կարգին։

Ներսէս Բուենց ծաղկողի մեզի ծանօթ

⁽¹⁶⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց վիճակական Մեթ. էջ 689.

⁽¹⁷⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց վասպուրականի, էջ 689.

առաջին ծաղկեալ գործը վիճակական վերոյիշեալ թիւ 72 Աւետարանն է, որ սապէս կը նկարագրուի Հ. Տաշեանի ցուցակագրութեան մէջ։

«Զարդագիրք բազմագոյն՝ ամէն գլխոյ սկիզբն. աւետարանաց առաջին տողը բոլորովին թռչնագրով է. սկիզբն ալ մեծ դարձագիր մը, մարդագիր՝ թղ. 6ա, գազան՝ 87ա, 145ա, թռչնագիր՝ 251ա.։ Խորանք բազմագոյն՝ ոչ յաջող. թղ. 6ա, 87ա, 145ա, 251ա, ոմանք քիչ մը փնտուած։ Լուսանցադարդք բազմագոյն, ամէն գլխուն գիմաց, յաջող. տեսակ տեսակ թռչուններ, մեծ ձուկ, մարդագլուխ զարդեր։ Նկարք բազմագոյն, բայց անյաջող, թղ. 5ր (Մատթէոս փնտուած.) 86ր (Մարկ.) 144ր (Ղուկ.) 250ր (Յովհ.) լուսանցքի վրայ փոքր նկարիչներ⁽¹⁸⁾»։

Հ. Տաշեան թէեւ մեզի կու տայ մանրամասնութիւններ մանրանկարներուն և ծաղկին մասին, սակայն անոնք անբաւարար են, թէեւ ասկէ աւելի չէր կարելի ակնկալել ցուցակագրէ։ Հ. Տաշեան կ'աւելցնէ որ Մարկոսի նկարին տակ կարմիր թանաքաւ կայ «Զանարժան ծաղկողս զՆերսէս ճղտ»⁽¹⁹⁾, և յարգելի գիտնականը կը հարցնէ «ճղտ» փակագրութեան համար «ճաղա՞տ»։ Ինչ որ կրնանք ըսել սա է որ Ներսէս ծաղկող՝ երբեք ատիկա չէ դորձած իբր իր անձին նուագական. գոնէ ինծի ծանօթ չէ։

1590ին դարձեալ Բուենց գիւղն էր Ներսէս ծաղկող, որովհետեւ այդ տարին կը ծաղկէ վաղամեռիկ տէր Յովհաննէս քահանայէ սկսուած և Միսիթար քահանայէ աւարտեալ աւետարանը։ Ներսէս սա յիշատակարանը կ'աւելցնէ։

«Եւ ես Բուենցի Ներսէս մեղաւոր և տխմար, ծաղկեցի և կապեցի ի ինդրոյ մեծաշաւատ և

աստուածասէր ուս Մուրատին... (Թափուած է⁽²⁰⁾)»։

Ն. Բուենց հոս մեզի կը ներկայանայ ոչ միայն ծաղկող այլ և կազմող։ Ցուցակագիր Լալայեան շատ բան չ'ըսեր ձեռագրին գեղարուեստական արժէքին մասին և միայն կը ցուցակագրէ սապէս. «Սկզբնատառք գուռնաւոր թռչնագրեր։ Լուսանցադարդք գուռնաւոր զարդեր։ Մանրանկարք 14-4 աւետարանիչները։ Խորանք 10։ Կիսախորանք 4»։

1593ին դարձեալ Բուենց գիւղը կը ծաղկէ ուրիշ աւետարան մը, Բաղտասար քահանայ եղբորմէն գրուած Արդունի համար։ Ասոր յիշատակարանին մէջ Ներսէս կը գրէ.

«Զծաղիկն արի տկար Ներսէս, մեղօք լըցեալ ի մէջ մարգկան».

Զանուս ունիմ քահանայի, գործովս անարգ [և անպիտան,

Լըձեւս ունիմ քահանայի, գործովս լըցեալ աղտեղութեամբ։

Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք, յիշման [առնէք զիս արժան⁽²¹⁾»։

Ցուցակագրին համաձայն «Սկզբնատառք՝ գուռնաւոր թռչնագրեր։ Լուսանցադարդք՝ գուռնաւոր ծաղիկներ և զարդեր։ Մանրանկարք՝ 17-4 աւետարանիչներ, ոսկեզօծ։ Խորանք՝ 10։ Կիսախորանք՝ 4» (անդ)։

1595ին միշտ Բուենց գիւղը իրենց Խօթը սուրբ Նշանաց եկեղեցւոյն Սր. Գէորգեայ հովանւոյն տակ կը ծաղկէ ու կը մանրաւորէ Աւետարան մը, որ ծաղկումէն տասը տարի առաջ գրուած էր, 1585ին, Կիրակոս գրչէ Սպակերտի ճափուան գիւղի Սր. Երբորդութեան հովանւոյն տակ Յովսէփ և Շալիլ ստացողաց համար։

Ի՞նչպէս եղած է որ տասը տարի վերջ Բուենց գիւղը Ներսէս ծաղկողէ կը ծաղկուի

⁽¹⁸⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց վիճակական Մեթ., էջ 310.

⁽¹⁹⁾ Անդ, էջ 320.

⁽²⁰⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց վասպուրականի, էջ 718.

⁽²¹⁾ Անդ, էջ 734.

ձեռագիրը՝ յայտնի է: Ան ունի սա յիշատակարանը հոն:

Ծաղկեցաւ աւետարանս, Ու ու խի (1595) էր
[Թուական.

ի գեղըս՝ որ Բողենց կոչի, ի դուռն է (եօթը)
[սուրբ Նշանացն.

Ընդ հովանեաւ սուրբ Գեորգեայ, որ զօրաւ
[վար էր սրբազան:

... Զծաղիկն արի ես տկար Ներսէս, զգիրն
[կերակոս քաջանայն:

Զձեզ աղաչեմ, սուրբ քաջանայք, յիշման
[առնէք զիս արժան:

Ըզշարագորդ սուրբ գըրոցս՝ որ կոչի յիշա-
[տակարան,

Զհղայրն իմ ըզտէր Բաղտասար, և ըզհայրն՝
[Ղարտիրոս քաջանայն (22):

Յուցակագիրը կը վկայէ որ Աւետարանը ունէր «Սկզբնատուք՝ գունաւոր ծաղկազրեր և թռչնազրեր: Լուսանցազարդք՝ կարմրագոյն ծաղիկներ, զարդեր և խորաններ: Մանրանկարք՝ 18-4 աւետարանիչներ: Խորանք՝ 10: Կիսախորանք՝ 4 (23)»:

1599ին միշտ Բողենց գիւղին մէջ կը ծաղկէ Տէր Յոհաննէս քաջանայ «գրչէն» Պարոն Քրմանի և իր Սարգիս եղբոր համար գրուած Աւետարանը: Ներսէս մեր վերը տուած յիշատակարանը հոս ալ բառացի կը կրկնէ: Նոյն են նաեւ մանրանկարներուն թիւը և ծաղկումները 1595ին ծաղկած Աւետարանին հետ:

1602ին իր եղբոր Բաղտասար քաջանայի գրած աւետարանը, գրեալ Ստեփանոս քաջանայի և իւր Մեղիսեղեկ քաջանայ որդւոյն համար (թէեւ ցուցակագիրը Մարտիրոսի և Յովհաննէսի համար կը գրէ): Յիշատակարանը նորութիւն մը չի տար Ներսէսի մասին (24): Նոյն է նաեւ մանրանկարներուն թիւը, եւայլն, նախորդ երկու Աւետարաններուն հետ:

Այսքան են իրմէ ինծի ծանօթ արտադրութիւնները: Իր արուեստին մասին զըմ-

(23) Գրացուցակ Հայերէն Զեռագրաց Վասպուրական, Եր, էջ 708:

բաղդաբար բան մը չեմ կրնար ըսել, քանի որ իր մանրանկարներէն հատ մը իսկ տեսած չեմ: Կ'երեւայ թէ ժուժկալ է եղած ոսկիի գործածութեան մէջ, որովհետեւ հատ մը միայն իրմէ ծանօթ ձեռագիրներէն ոսկի ունի ծաղկումներուն կամ մանրանկարներուն մէջ, այդ 1593ին Արղուն խաթունի համար գրուած Աւետարանն է, իր Բաղտասար քաջանայ եղբոր կողմէ:

Նկատելով իրենց յիշատակարաններուն մէջ Աղթամարայ կաթողիկոսներուն մասին մեծ համարումներ, գուցէ կարելի է երեւակայել որ այդ կղզիին արուեստին ազդեցութեան ենթարկուած են:

Ներսէս Քաջանայ Բողենցի մասին յաւելուածական ծանօթութիւններ կու տայ իր Յակոբ քաջանայ որդին՝ գրիչ և ծաղկող: 1621ին Յակոբի գրած Աւետարանին մէջ կը կարգանք որ իր մօր անունը Նունուֆար էր, և ունէր երկու եղբայրներ Մարտիրոս ու Մինաս: Յակոբի հայրը հաւանաբար ողջ էր 1621ին Աւետարանին գրչութեան ատեն: Յակոբ հաղիւ աւարտած այս գրչութիւնը կը մեռնի:

ՅԱԿՈԲ ՔԱՋԱՆԱՅ ԲՈԼԵՆՑ

Ներսէս քաջանայ Բողենցի երեք որդիներէն մին է Յակոբ քաջանայ, որուն երկու միւս եղբայրները կը կոչուին Մարտիրոս և Մինաս, իսկ մայրերնին Նունուֆար: Այս տեղեկութիւնները մեզի կը տրուին Յակոբ քաջանայի 1621ին գրած և ծաղկած Աւետարանին յիշատակարաններէն:

Յակոբ գրիչ Յիսուս Որդի մը կը գրէ 1614ին Բողենց գիւղը: Զեռագիրը այժմ կը գտնուի Սաղէմի մեր հաւաքման մէջ, որուն յիշատակարանը ամբողջութեամբ հոս կու տամ:

«Փառք ամենասուրբ երրորդութեան հաւր և որդոյ և հոգւոյն սրբոյ այժմ միշտ և յաւի-

(23) Անդ, էջ 697:

(24) Անդ, էջ 803-808:

տեանս ա(մէն): Գրեցաւ գիրքս որ կոչի Յ(իսուս) Որդի ի Թուականութեան հայոց. Ուր (1614)ի գեաւալ Բողենց. Ընդ հովանեաւ ս(ուրբ) Գեորգեայ զաւարարին. և ս(ուրբ) Ա(ստուած)ածնին, և եւթ ս(ուրբ) նշանացն. ձեռամբ բաղմամբ գրողական Յակոբի. ի խնդոյ սրբակրան (Նշուած և խեղճ կերպով կարապետ գրուած) Վ(ա)րդ(ա)պետին: Արդ աղաչեմք զամենեւեան որք հանգիսիք սմայ կամ աւագիք ի սմանէ կամ գաղափար առնոյք յիշեսէք ի Ք(րիստոս) զստացաւ տառիս (Նշուած և կարապետ գրուած) բազումապետ և զծնողն իւր և զամենայն արեան մերձաւորս իւր զկենդանիս և զշահագուցեալսն ի Ք(րիստոս). որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և համաւրէն զարմից յետ աստի փոխելոցն ամէն»:

Յակոբի առաջին ինծի ծանօթ գրչութիւնը Աւետարան մըն է 1618ին խալ-հաթունի համար Մոկաց Բողենց գիւղը գրուած: Յուցակագիր լալայեան զժրագրաբար յիշատակարանը չի տար, այլ միայն կը ծանօթագրէ «Յիշատակարանում սովորական ձեւով յիշատակուած է միայն գրիչը, ստացողը, գրութեան ժամանակը և տեղը (25)»:

Իսկ ծաղիկներուն և մանրանկարներուն համար կը ցուցակագրէ, «Սկզբնատուք գունաւոր թռչնազրեր, Լուսանցազարդ գունաւոր զարդեր: Մանրանկարք 16-4 աւետարանիչներ: Խորանք 10: Կիսախորանք 4» (անդ): Կ'երեւայ թէ Աւետարանիս ծաղկողն ու կազմողը չէ յիշուած յիշատակարանին մէջ՝ քանի որ ցուցակին մէջ նշանակուած է «անյայտ»: Գուցէ թէ ծաղկողը և թէ կազմողը նոյն ինքն գրիչ Յակոբն ըլլայ կամ իր հայրը Ներսէս քաջանայն:

Յակոբ մեզի թողուցած է երկրորդ Աւետարան մըն ալ, 1621ին գրուած: Որուն յիշատակարանին մեզի համար հոս կարեւոր մասը կ'արտագրեմ:

«Զայս մեծ գանձս աստուածային տեսեալ աստուածաւոր կրին Գողալ. որ եղև ցանկացող

(25) Գրացուցակ Հայերէն Զեռագրաց Վասպուրական, Եր, էջ 858:

աստուածախօս սուրբ աւետարանիս, որ ստացաւ զսա, հաւալ արգեանց իւրոց և արդար վաստակոց»:

Զոր անջինջ յիշատակ մընա, Յայսմ հեռէ մինչ յաւիտեան, Որք ընթեռնուն կամ տեսանէն, Բողոր սրտիւ զօգտի տան: Զձեզ աղաչեմ, սուրբ քաջանայք, Յիշման առնէք ըզմեզ արժան: Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն Գրեցաւ աւետարանս Ու ու Հ (1621) էր Թուական, ի յերկիրը Մոկաց, ի գաւղը՝ որ կոչի Բողենց, ի դուռն է (եօթը) սուրբ Նշանացն. Ընդ հովանեաւ սուրբ Գեորգեան:

Կաթողիկոս Աղթամարայ՝ Տէր Ստեփանոսին սրբազան, Վարուքն սուրբ և առաքինի. Հայցեմք յապենիազ Տեառնէ՝ Անփորձ մընայ և անսասան. Շըբեղ փառք նա զարդարի Ընդ վարդապետս երկոտասան:

«Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս՝ ձեռամբ տէր Յակոբին և ծաղկեցաւ, և յաւարտման ծաղկին՝ փոխեցաւ առ Քրիստոս: Արդ, աղաչեմ զձեզ, որք հանգիսիք սմայ, տեսանելով կամ արեւակելով. Աստուած-ողորմի ասացէք՝ Յակոբ քաջանային և հօրն՝ Ներսէս քաջանային. և ինձ յիշատակ գրողիս. և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն»:

Յիշատակարաններուն ամէնէն վերջը. «Գարձեալ, յիշեցէք և Աստուած-ողորմի ասացէք՝ Յակոբ քաջանային և եղբարցն՝ Մարտիրոսին և Մինասին և մօրն՝ Նունուֆարին և հօրն՝ Ներսէս քաջանային և հօրեղբարցն՝ Բաղտասար քաջանային և Գրիգոր քաջանային և Կարապետին և Կիրակոսին և Ղուկասին. և պապուն Մարտիրոս քաջանային եւայլն (26)»:

Ան ուրեմն մեռած էր 1621ին, կ'երեւայ թէ ոչ շատ երիտասարդ: Գժրախտաբար

(26) Անդ, էջ 866-868:

յիշատակուած չէ թէ ամուսնացած էր կամ թէ զաւակներ ունէր:

Յակոբ քահանայի այս վերջին աւետարանը որոշ կերպով ինքը ծաղկած է, որ ըստ ցուցակագիր Լալայեանի ձեռագիրը ունէր «Սկզբնատուք թռչնագրեր: Լուսանցազարդ գունաւոր զարդեր: Մանրանկարք 15-4 աւետարանիչները, ոսկեղօծ: Խորանք 10: Կիսախորանք 4⁽²⁷⁾»:

Դժբախտաբար առ այժմ ասկէ աւելի բան մը չեմ կրնար ըսել Յակոբի կեանքին կամ գործերուն մասին:

Յանուանէ ուրիշ ծաղկողներ ինծի ծանօթ չեն Բուենց զարոյցէն: Սակայն կան ձեռագիրներ, ինչպէս Մարտիրոս քահանայի 1582ին գրած Աւետարանը՝ որ ունէր «Սկզբնատուք գունաւոր թռչնագրեր: Լուսանցազարդ գունաւոր ծաղկներ և զարդեր: Մանրանկարք 4 աւետարանիչներ: Խորանք 7: Կիսախորանք 4⁽²⁸⁾»: Սակայն զժբախտաբար մանրանկարներուն հետնաեւ մանրանկարիչ-ծաղկողը կը մնայ ինծի անծանօթ: Իսկ Մարտիրոս քահանայի 1582ին գրած երկրորդ Աւետարանին զարդերուն և մանրանկարներուն մասին այդքան ալ ծանօթութիւն չունինք:

(Շարունակելի)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

⁽²⁷⁾ Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց վարչութիւն, Երևան, էջ 863.

⁽²⁸⁾ Անդ, էջ 695.



ԱՐՏԱԽԱԶԴ Գ.

ԵՒ

ՀՈՌԹԵԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հին Հայաստանի Արտաշէսեան թագաւորութեան գերազնիւ դէմքերէն մին էր Արտաւազդ Գ. թագաւորը (55-34 Ն. Ք.): Իբր Տիգրան Մեծի որդին՝ ան վառահեղ դէմք մըն է ու իբր գրասէր ու մատենագիր՝ անմահացած է յոյն գիտնականներու ու օտար պատմագէտներու գովեստներով:

Արտաւազդ Գ.ի դահակալութեան թրւականը մեզի կ'աւանդէ Կիլիկիոն, հռովմայեցի նշանաւոր ճարտասանն ու մատենագիրը, երբ կ'ըսէ թէ Քրիստոսէ առաջ 54 թուականին Կրասոսի արեւելք հասնելուն՝ Հայաստանի դահին վրայ կը գլուխէր Արտաւազդ թագաւորը: Իսկ Տիգրան Մեծի մասին խօսելով Կիլիկիոն, 56 թուականի փետրուար ամսոյն իր մէկ ճառին մէջ արտայայտուած է ըսելով. «Դեռ կը թագաւորէ նա»: Ուրեմն որոշ է թէ Արտաւազդ Գ. դահակալած էր 55 թուականին (Ն. Ք.):

Մեմնոն ու Պլուտարքոս կը պատմեն թէ իր հօր կենդանութեան շրջանին՝ Արտաւազդ պահ մը դահակից եղած էր իրեն: Այս կրնայ պատահած ըլլալ Տիգրանակերտի պատերազմէն վերջ՝ երբ ընկճուած ու յողմած ծերունի Մեծն Տիգրան օգնականի մը պէտքը ունեցած էր 69 թրւականին, ու քիչ վստահութիւն ունէր Պոնտոսի ռազմադէտ՝ բայց աննկարագիր ու խորամանկ Միհրդատ Եւպատոր թագաւորին վրայ:

Լանկլուա նոյնիսկ կը յիշատակէ դրամ մը գոյութիւնը, որուն վրայ կ'երեւին Տիգրան Մեծի եւ Արտաւազդ Գ.ի խոյ-

րակիր զոյգ գլուխները՝ յունատառ «Վա-սիլէոս Տիգրանու» (թագաւորին Տիգրանայ) բառերով, որ փաստ մըն է թէ ան դահակից եղած էր իր օգոստափառ հօր:

Արտաւազդ Գ. ուսումնասէր ու մտաւորական նշանաւոր հայ թագաւոր մըն էր: Պատանեկան տարիներուն, իր մեծազօր հայրը՝ Հայաստանի արքունիքը հրաւիրած էր նշանաւոր յոյն գիտնականներ, որոնք Արտաւազդի դաստիարակներն ու առօրեայ մտերիմները եղած էին: Այս պատճառաւ, տաղանդաւոր հայ արքայորդին սկսաւ ինքն ալ արտադրել գրական, թատերական ու պատմական հատորներ, որոնք պահուած էին մինչեւ երկրորդ դար: (Տես Պլուտարքոս, Զուգակշիռ - «Կրասոս»): Ուրիշ տեղ մը Պլուտարք կը գրէ հետեւեալները. «Արտաշէսեան շրջանին գրեթէ բոլոր հայ բարձր դասակարգին մէջ գոյութիւն ունէր գրական մշակուած ճաշակ մը, ու այս կը հաստատուի Տիգրանակերտի ու Արտաշատի մէջ կատարուած կրկնակ թատերախաղերով (Անդ, «Կրասոս» եւ «Լուկոլլոս»):

Մինչ իր հայրը կը թագաւորէր՝ Արտաւազդ հանգիստ կեանք կը վարէր ու կրնար զբաղիլ իր սիրելի գրական ուսումնասիրութիւններով, բայց երբ հօրը մահուան վերջ՝ ամբողջական Մեծ Հայքի դահը իրեն մնաց, ստիպուեցաւ սուրբ ձեռք առնել ու խառնուիլ Հռոմ-Պարթեւական վէճերուն:

Իր օրով՝ Հայաստանի անմիջական դժբաղինէն էին Հռովմէական ու Պարթեւական պետութիւնները, որով կը ստիպուէր զորք ունենալ մէկուն կամ միւսին հետ, երբ այդ երկու պետութիւնները իրարու դէմ պատերազմէին:

Արտաւազդէն առաջ, Հայաստանի թագաւորները աւելի հանգիստ էին այս տեսակետով, որովհետեւ Հայաստանի թիկունքը գոյութիւն ունէին Փոքր-Ասիական քանի մը անկախ կամ կիսանկախ թագա-

ւորութիւններ ու Պոնտոսի պետութիւնը, որոնք պատուարներ էին Հռովմի դէմ: Իսկ Հայաստանի հարաւային սահմաններուն կից գտնուող Սելեւկեան պետութիւնը՝ գեղեցիկ պատուար մըն էր պարթեւ աշխարհակալներու դէմ, որով Հայաստան կրնար բաղդատաբար խաղաղ ու ապահով ըլլալ թէ՛ Հռովմէական ու թէ՛ պարթեւական ասպատակութիւններու դէմ:

Արտաւազդի օրով՝ չուրջի անկախ թագաւորութիւնները ջնջուած էին, ու Հայոց թագաւորը կը նկատուէր համակ Առաջակողմեան Ասիոյ զօրաւորագոյն թագաւորը, բայց հակառակ այս կացութեան շատ դժուար էր չափուիլ Հռոմի ու Պարթեւաստանի դէմ միասնաբար, ինչպէս կը բացատրէր նոյնիսկ հռոմէասէր Պլուտարքոսը:

Ստեպ կը պատահէր որ Հայոց թագաւորը հակէր Հռոմի կամ Պարթեւաստանի կողմը. սակայն այս ընթացքը երկու պետութիւններէն մին բարեկամ՝ բայց միւսը թշնամի կ'ընէր իրեն:

Երբ դեռ Հռոմ Արեւելքի մէջ գերակշիռ դիրք մը չունէր, Հայաստան առանձին կրնար չափուիլ ու յաղթել Պարթեւաստանին, բայց երբ Հռոմ սկսաւ Արեւելքի մէջ զօրանալ, Հայաստանի թագաւորները երբեմն կը ստիպուէին անոր փափաքները կատարել: Ու այսպէս, Մեծն Տիգրանի մահէն վերջ, Հայաստան երկու հօր պետութիւններուն միջեւ կռուախնձոր մը եղաւ (ըստ Ստրաբոնի):

Հայաստանի թագաւորները ընդհանրապէս կը փափաքէին Հռոմի կողմը հակել, բայց հակառակ ասոր՝ Հռոմի ապերախտ զօրավարները միշտ կը ջանային Հայոց թագաւորը պատասխանատու բռնել, երբ իրենք պարթեւներէն պարտուէին: Երբեմն այնքան կը ստորնանային, որ բարեկամական ձեւերու տակ ու եղբայրական համբոյրներէն յետոյ՝ Հայոց թագաւորները կը ձերբակալէին եւ անոնց կեանքին դէմ